զոյ զպատիժ իմն, այսինքն ժանտամահ սաստիկ, զի աւուրն մէջ իւրաքանչիւր քահանայ գնամք չորս կամ հինգ հիւանդ տեսանելոյ։ (Հայր Յակոբ առ Մխիթար, յամի 1736 սեպտ.ի 12. [Էրզրում?])։

խէ.

Են այժմ [հայք անմիաբանք] ի յայնքան մեծի նեղութեան, զոր ունին ի յունաց վասն երուսաղեմի սուրբ յակոբին... եւուն յարքունիս զբազում գանձս զի սուրբ յակոբ ի ձեռս իւրեանց մնասցէ, ոչ եղև, զի եդին զոմանս ի բանտ մահու. և յղեցին սաստիկ հրամանաւ թագաւորին բերել տալ զէհտանշհրնֆի[1] ի յերուսաղէմայ, որպէս զի տեսցէ... և համեմատեցուսցէ զնա ընդ քիւթուկին թէ իցէ նման օրինակեցեալն ընդ օրինակին. ապա թէ ոչ՝ կտրեսցէ ընդ մէջ զայլայլօղսն արքունական գրոյն, և զմասն նոցա ընդ կեղծօղսն դիցէ. քանզի յոյնք ամբաստան եղեն զսոցանէ տաճկաց [այս վերջին բառ ծածկագրութիւն է], թէ սոքա այլայլեալք իցեն զէհտանշհրնֆի [զհատոցը չէրիֆ] արքայական և այլն։ (Զէմպերէքբաշի տիրացու Վարդան առ Մխիթար, յամի 1735 դեկտ. 25. [Կ. Պոլիս])։

խը.

Ուրախ եղէ լսելով զգնալն Գերյարգութեանդ ընդ նորընծայից ի Նովէնթայ...։ Աստանօր մեծ պատրաստութիւն զոյ պատերազմի։ Զ4 մեծամեծ նաւս կազմեն, և զ4 կալերս։ 150 մեծ արապայ թօփ, պարանք, և առագաստք, և այլք կահք նաւուց եկին ի թռիեսթու, որպէս զի նոքօք զարդարիցին նաւք տեղւոյս։ Նաև 40 կամ 50 Վենայու նաւք լիք էին թօփովք և կիւլլէիւք եւն.։ Թէպէտ արտաքուստ ոչ է հաւաստի կերպ և եղանակ պատերազմին։ Նաև աւելի քան զ100,000 զինուոր ունի ի պատրաստի։ Կայսրն[2] ոչ է աստ, բայց ի վիճիլիայի համբարձման գալոց է։ (Հ. Թ. Յովանիսեան առ Մխիթար, յամի 1737 Մայիսի 29. [Եղիսաբեթուպոլիս?])։

խթ.

Զնիշն, զոր էառ տուէշն՝ զնա վերստին առին սոքա և ենթարկեալքն, որք գնացին ըստ զօրաց տուէշին՝ զերծան՝ և որք մնացին՝ գերի վարեցան ի տաճկանց։ Զօրքն այլազգեաց գնացեալք առ օգուն՝ կամեցեալք են առնուլ զնա ի ձեռաց մուշտակին՝ բայց ամենեքին կոտրեցեալք են ի մուշտակի զօրացն։ Եւ ասի լինել յայսմիկ ծմեռան հաշտութիւն։ (Հ. Պօղոս վարդապետ առ Մխիթար, յամին 1737 հոկ. 31. [տեղի?])։

ֆ.

Իսկ զթարգմանութիւն գրեթէ ամենևին առնել ոչ կարեմ, սակս ահի և երկիւղի, զոր կրեմք ի ձայնից պատերազմականաց. քանզի մերթ ասեն թէ աստի մտանէ տաճիկն և անտի թաթարն. մերթ թէ աստի Պոնավալ ուրացօղն, ընդ Ռագօցիին որդւոյն. և անտի ամենայն ազգք տեղացիք, այսինքն թէ մաճառք, թէ օլախք, և թէ սասք. արդէն իսկ կրճտեն զատամունս իւրեանց ի վերայ հայոց, և սպասեն զի միայն դիցէ զոտն իւր տաճիկն ի դրանսիլվանիայ, զի իսկոյն յարձակիցին ի վերայ մեր և կենդանւոյն խողխողիցեն զմեզ։ Թէպէտ լուաք թէ Ֆրանձուզն ասացեալ իցէ տաճկին, զի առնիցէ գխաղաղութիւն ընդ Գառօլոսի Կայսերն. ապա թէ ոչ՝ ինքն անյապաղ ելցէ ի վերայ նորա։ Եւ յայն սակս լուաք թէ տաճիկն յղեալ իցէ ի Վեննա զերկուս փաշայս բազում ջորիաբեռն ոսկւով և արծաթով. (Հ. Թեոդորոս Յովանիսեան առ Մխիթար, յամի 1737 դեկտ.ի 10, ի Էջիզապէր քաղաք)։

---

1. Ծածկագիր է այս բառը, պէտք է կարդալ զհատոցը չէրիֆ։
2. Կարոլոս Զ.։